Արդարեւ, Խալիֆ Շայրանի կուսակալ էր Հայաստանում 827–832 թիւը, չորս տարի, ինչպէս վկայում են նրա անունով հասած դրամները: Սրանով հաստատւում է միանգամայն Սմբատի իշխանութեան սկիզբը· եւ որովհետեւ նրան տրւում է երեսուն տարի իշխանութիւն, ուրեմն նրա ժամանակը ընկնում է 8267|7—856|7 տարիները:

Յաղթական կուսակալ Խալիֆը ներեց վեհանձնօրէն ապստամբներին եւ ամենից առաջ Սեւադային: Երկիրը խաղաղեց: Հայ նորբարոզրոջ քաղաքական ոյժերը այնուհետեւ պիտի ընթանային միահաւաք մարմին կազմելու շաւղով: Կասկած չկայ, որ պիտի յաջողէին հարթել համագործակցութեան ուղիները եւ կերտել քաղաքական պատկառելի շէնք:

Սակայն, նոր ձգտումները բախեցին հին խոչընդոտների: Երկու հարեւան պետութիւններն էին՝ Բիւզանդիա եւ արաբներ, երկու պատնէշ, կանգնած հայ զարթօնքի դէմ ու դէմը:

Հայաստանը, որ հարուստ չէ այլապէս բայց եթէ օդով եւ ջրով, տարօրինակ պատրիչ պատառ է օտար ճաշակի համար: Բացարձակ բռնութեան եւ գաղտնի դաւերի դաշտ է հայ երկիրը: Ոսոխ պետութիւնները չեն ուզում զիջանել մէկը միւսին եւ ոչ էլ թողնում են, որ բնիկ ժողովուրդը տրամադրէ իր բախտը: Տեսնելով հայ երկրի կենդրոնացման ջանքերը, երկու հարեւաններն էլ լարում են իրենց ոյժերը խափանելու ինքնուրոյն մարմնի զարգացումը, յօշոտելով նրան աջ եւ ձախ: Բիւզանդիան քարշում է իրեն Սպերի եւ Տայքի նորակազմ իշխանութիւնները, արաբները ձգտում են հանել Տարօն ու Վասպուրականը Սմբատի ազդեցութեան շրջանից:

Ազանդաւոր Բաբակը դեռ աղմկում էր Ատրպատական եւ Ազուանք: Նա ոտ էր կոխել Սիւնիք եւ չէր ուզում դուրս գալ: Վասակ Սիւնին էր բերել նրան ընդդէմ Սեւադայի: Այժմ նա խառնւում էր տեղական վէճերին: Սիւնեաց իշխանական տունը լարուած էր Ազուանից Միհրական կոչուած հին տոհմի դէմ: Ներսէհ Փիլիպպեանը, որ Վասակի թոռն էր, սպանում է Վարազ-Տրդատ Ստեփաննոսեանին իր դիեցիկ որդով: Սպանուածի կինը առնում է իր դռնտոր Սպրամը եւ գիշերով փախչում Խաչենի բերդը եւ ամուսնացնում իր դուստրը Ատրներսեհ իշխանի հետ: («Ատրներսեհի՝ Սահլի որդւոյ որ է ի Տոհակայ եւ ոչ Սիւնեաց» կաղանկատուացու այս նախադասութեան մէջ ի Տոհակայ ուղղելու է ի Սահակայ· խօսքը Վասակ Սիւնիի որդի Սահակի=Սահլի մասին է, որի որդին էր Ատրներսեհը: Սրանով Միհրական տունը ձուլւում է Սիւնականի հետ):

Սիւնիք, մանաւորապէս Բաղք գաւառը, որ Ներսեհի բաժինն էր, ուզում է ազատուել Բաբակից եւ ըմբոստանում է 275 հ. = 826–7 թուին: Բաբակ գալիս է աւերում Բաղաց աշխարհը, հետեւեալ տարին անցնում է Գեղարքունիք եւ կոտորում որպէս թէ 15 հազար մարդ: Երկու տարուց յետոյ, ուրեմն 828–9 թ. յաղթում է արարական ոստիկան Տաւուսին. յաջորդ տարին՝ Աբրահամ որդի Ղեթայ զօրավարին (Մովս. Կաղ. Գ. 19):

Տաւուս եւ Աբրահամ յայտնի են արաբական աղբիւրներից — Մուհամմեդ իբն Հումայիդ ատ-Տուսի, եւ Իբրահիմ իբն ալ-Լայթ իբն ալ-Ֆազլ:

Առաջնի կռիւը Բաբակի հետ տեղի է ունեցել հիջրի 214 թ., որ է 829–30 թ.: Ասել է թէ միանգամայն հաստատւում են հայ պատմագրի խօսքերը: Նոյն 829–30 տարին սպանուեց Ստեփաննոս կոչուած Արլ-Ասադ: Սա վերեւ յիշուած Վարազ-Տրդատի հայրն էր:

Սպանողները Դաւոն եւ Շապուհ անուն իշխաններն էին, որ մեղադրում էին Ստեփաննոսին, որ բերել էր տուել Բաբակին եւ կոտորել բաղակացիներին: Սպանիչները տիրանում են նրա կալուածներին 12 տարի, մինչեւ որ իրենք եւս ընկնում են որպէս զոհ վրէժինդրութեան- Ստեփաննոսի քոյրը Ապրսամին մայր էր Եսայի Արու-Մուսէ կոչուած իշխանի, որ իր քեռու վրէժը լուծելուց յետոյ տէր է դառնում նրա յափշտակուած գաւառներին:

Արաբ մատենագիրները Աբու-Մուսէին համարում են իշխան Բայլականի (Փայտակարանի մայրաքաղաքը): Սիւնեաց տունը, թւում է, որ յաջողել էր ձեռք ձգել Արցախը եւ հին Միհրական տոհմից մնացել էր կանացի ճիւղը՝ քաշուած Բայլական: